ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՍՈՒՐԵՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ՈՐՈՇՈՒՄ

Թիվ 19 17.09.2014թ.

ՍՈՒՐԵՆԱՎԱՆԻ ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՐԵՆԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության << Քաղաքացիական օրենսգրքի>. 63-րդ հոդվածի 1-ին մասի . <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 14-րդ մասի և << Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով՝ Սուրենավան համայնքի ավագանին որոշում է.

1.Սուրենավանի փակ բաժնետիրական ընկերությունը/ այսուհետ ՓԲԸ/ վերակազմավորման ձևով վերակազմակերպել Սուրենավանի համայնքային ոչ առևտրային կազմակերպության/այսուհետ ՀՈԱԿ/:
2.համայնքի ղեկավարին՝
ա/ մեկամսյա ժամկետում կազմել և հաստատել ՓԲԸ վերակազմավորման կարգը և պայմանները և տեղաբաշխված բաժնետոմսերի և այլ արժեթղթերի փոխարկման կարգը.
բ/ հաստատել ՓԲԸ գույքի և գույքային իրավունքների ՝ ՀՈԱԿ-ին փոխանցման ակտը , որում առկա են վերակազմակերպվող ընկերության գույքի և պարտատերերին ու պարտապաններին վերաբերող բոլոր պարտավորությունների իրավահաջորդության մասին դրույթներ.
գ. Կայացնել ՀՈԱԿ-ի ստեղծման մասին որոշումը , կազմել կազմակերպության կանոնադրության նախագիծը և ներկայացնել ավագանու հաստատմանը.
դ. Կազմել համայնքային կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և ամրացվող ՝ համայնքին պատկանող գույքի կազմը և ներկայացնել ավագանու հաստատմանը :
3.Կազմակերպության կառավարման, ինչպես նաև << Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի <<է>> ենթակետով ու 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Սուրենավանի համայնքի ղեկավարին:
4.ՓԲԸ տնօրենին ընկերության վերակազմավորման մասին:

Կողմ-5 դեմ-0 ձեռնպահ-0

Պ. Ադամյան Վ. Ղազարյան

Կ. Մարտիրոսյան Ա. Շահվերդյան

Ա. Աբրահամյան

Համայնքի ղեկավար Գ. Կարապետյան